ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ԱԹՈՌՈՅ

# ՀԱՒԱՔԱՐԱՆ

## ԱՆՈՒԱՆՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԱՑ (ԱՂԹԱՄԱՐԱՑ)

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ, ԼՈՅՍ ԸՆԾԱՅԵՑ,
*ԱՂԹԱՄԱՐԵԱՆ ԱԹՈՌՈՅ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ*
*ՀԱԶԱՐԱՄԵԱԿԻ (915—1915) ԱՌԹԻՒ.*

ՄԵՍՐՈՊ Վ. ՄԱՔՍՈՒԴԵԱՆՑ,
ՄԻԱԲԱՆ Մ. ԱԹՈՌՈՅ.

*Ս. ԷՋՄԻԱԾԻՆ*
Էլեկտրաշարժ Տպարան Մայր Աթոռոյ
*1916*

# ՀԵՂԻՆԱԿԻ ԳՈՐԾԵՐԸ

1. ՕՏԱՐ ՓՈՒՆՋԵՐ, Ա. հիւսք, Շիլլերի բալլադաներից, թարգմ. գերմ., 1904, Թաւրէժ, . . 20 կոպ.
2. ՕՏԱՐ ՓՈՒՆՋԵՐ, Բ. հիւսք, Հաֆըզի հնգեակները, քառեակներն ու տաղերից, թարգմ. պարսկ., 1905, Թաւրէժ . . . . . 25 »
3. ԵՐԵՔ ԳՕՏԻ, Ռուսական հէքիաթ, Վ. Ա. Ժուկով-սկուց, թարգմ. ռուս., 1905, Թաւրէժ, . . 10 »
4. ՄԱՅՐԱԿԱՆ ՍԷՐ, Անդերսէնից, թարգմ. գերման. (սպառած), 1905, Թաւրէժ, . . . . 5 »
5. ՈՍԿԷ ԽԱՐԱԶԱՆ, Ա. Ռանգաբէից, թարգմ. յուն. (սպառած), 1906, Պարիզ . . . . 20 »
6. ԺՈՒԺԿԱԼ ԳԻՆԵՏՆԵՐԸ, Գր. քահանայ Պետրովից, թարգմ. ռուս. 1908, Էջմիածին . . . 10 »
7. Le parler armenien d'Akn (Ակնայ հայ բարբառը) լեզուաբան. ուսումնասիրութիւն, 1912, Պարիզ, 4 ռուբ.
8. ՇԱԿՈՒՆՏԱԼԱ, Հնդկական պատմուածք, Վիասայից, թարգմ. ֆրանս. 1914, Էջմիածին, . . . 20 կոպ.
9. ՅՈՅԶԵՐ, (ինքնուրոյն և թարգմանական) բանաստեղծութիւններ, 1915, Բագու. . . . 50 »

281.6 (09)
Մ-41

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ԱԹՈՌՈՅ

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 Թ.

# ՀԱՒԱՔԱՐԱՆ

## ԱՆՈՒԱՆՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՑ (ԱՂԹԱՄԱՐԱՅ)

ՏԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ ԼՈՅՍ ԸՆԾԱՅԵՑ,
*ԱՂԹԱՄԱՐԵԱՆ ԱԹՈՌՈՅ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ*
*ՀԱԶԱՐԱՄԵԱԿԻ (915—1915) ԱՌԹԻՒ.*

ՄԵՍՐՈՊ Վ. ՄԱՔՍՈՒԴԵԱՆՑ,
ՄԻԱԲԱՆ Մ. ԱԹՈՌՈՅ

Վ. ԷՋՄԻԱԾԻՆ
Ելեկտրատիպ Տպարան Մայր Աթոռոյ
1916

«Սոյն հրատարակութիւնից որ և է արտատպութիւն արգիլուած է»

A III/455

ԲԱՐԵՐԱՐԻՍ

# ԱՒԵՏԻՔ Բ. ՂՈՒԿԱՍԵԱՆՑԻ

*ՄԻՇՏ ԽՆԿԵԼԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ.*

**Մ. Վ.**

## Համառօտումներ.

Աճ. = Հ. Աճառեան. Հայ բարբառագիտութիւն.
բրբ. = բարբառային (ձև, արտասանութիւն).
կրմ. = կարմրադեղով.
հմ. = համեմատիր.
Ձ. = Ձեռագիրը, Ձեռագրում.
յետ. աւլ. = յետոյ աւելացրած.
նխպ. = նախապէս.
նոտրգ. = նոտրագիր, նոտրգրով.
շրն. = շարունակութիւն նախընթաց տողի.
ջնջ. նշ. = ջնջման նշանով.
տղմ. = տողամիջում, տողամիջում գրուած.

## Համառօտ նկարագրութիւն Ձ.ի.

*$23^{1}/_{2} \times 17 \times 1^{1}/_{2}$. Թերթք 55.*

*Թղթ. կաշեկազմ, առանց որ և է զարդարանքի կամ նկարի. մեծ մասամբ բոլորագիր. վերջին էջերը նոտրգ. իւրաքանչիւր էջ կրում է կարմրագիծ քառակուսի շրջանակ. Թուակ. գրչթ. ՌՄՀԳ = 1824. Գրիչ՝ Ղազար, Գրութ. տեղ՝ Աղթամար։*

# ԸՆԹԵՐՑՈՂԻՆ.

Գործիս վերնագիրը՝ ՀԱՒԱՔԱՐԱՆ ԱՆՈՒԱՆՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԱՑ՝ ձեռագրի յիշատակարանումն է միայն երեւում և ոչ սկզբում, ինչպէս սպասելի էր։ Մենք, մեր յիշատակութեանց մէջ, բաւական ենք համարում հէնց միայն Հաւաքարան միակ բառն էլ իբրև խորագիր, ինչպէս մեզնից առաջ արել են ուրիշներ։

Ձեռագիրը սեփականութիւն է Աղթամարի կաթուղիկոսական տան և փոխադրուած է Մայր Աթոռ անցեալ 1915 թուի ամառը. գրութեան թուականն է, ինչպէս տեսնում ենք յիշատակարանում, ՌՄՀԳ—1824.

Այստեղ, հրատարակութեանս սկզբում, կարևոր ենք համարում յայտնել, որ ընդօրինակութիւնը կատարուած է մեր իսկ ձեռով եւ տառացի ճշտութեամբ։ Ոչ միայն բուն Հաւաքարանի մասն է գրի առնուած, այլև զանազան բովանդակութիւններով և զանազան գրիչներից մուծուած ոտանաւոր և արձակ գրուածներ, որոնց պատահեցանք միևնոյն հատորում։

Չենք ծանրանում գործիս վրայ իբրև մի մեծ պատմական յիշատակարանի. որովհետև, ինչպէս պիտի տեսնէ ընթերցողը, սա գրուած է որոշ դիտումով, այն է՝ բարձրացնել Աղթամարի կաթուղիկոսութեան և վանքի դիրքն ու հեղինակութիւնը։ Բայց հէնց պատմութեան համար իր թէ տուելութիւններով և թէ թերի կողմերով, մի կարևոր վաւերագիր է, որ ցարդ այսպիսի լրութեամբ դեռ չէր լոյս տեսած։

Առանձնապէս ուշագրաւ է Ս. Խաչ անուն Գագկաշէն տաճարի նկարագրութիւնը, որի մանրամասնութիւններից անտարակոյս պիտի օգտուի առհասարակ հայ գեղարուեստի և մասնաւորապէս հայ ճարտարապետութեան պատմութեամբ զբաղուողը։

Հաւաքարանի ձեռագիրը պատկանում է Ղազար անուն մի գրչի, որ ինքն իրան անուանում է «յոյժ տկար» և «անարհեստ»։ Նա եղել է մի բարեպաշտ նուաւար, որ հազիւ գրել կարդալ է իմացել և այս աշխատութիւնը գրի է առել հաւանօրէն իր ծերութեան հասակում, որով միայն կարելի է բացատրել բազմաթիւ մոռացութիւններ, նոյնիսկ թուերի կարգի մէջ, որ պատահում են ձեռագրում։ Այս նուաւար Ղազարին չպէտք է շփոթել մի ուրիշ Ղազարի հետ, որ եղել է աբեղայ, և որի գրչին է պատկանում գործիս վերջում ներմուծուած ոտանաւորներից մէկը—«Ամենայն ազինք՝ ակնարկեալ ի յիս՝ . . . .»։ Սոյն ոտանաւորը, թէև տկարական հետևողութիւն Շնորհալու «Աշխարհ ամենայն»ի, գրուած է մաքուր և կանոնաւոր հայերէնով և ուղղագրութիւնը զերծ է սխալներից։ Գալով մեր նուաւար Ղազարին՝ նրա տգիտութիւնը ցաւալի լինելով հանդերձ ունի այն առաւելութիւնը, որ, նոյնիսկ իր սխալներով, շատ բան է ուսուցանում մեզ իր դարի աշխարհաբարից։

Մի ուրիշ արժէքաւոր հանգամանք, որի համար յատկապէս տողերիս գրողն իրան չափազանց երախտապարտ է զգում սոյն համեստ գրչի հանդէպ, այն մի քանի տողերն են, որոնցով նա երկիցս տեղեկութիւն է տալիս Հաւաքարանիս նախատիպն հանդիսացող երկու հին ձեռագրերից հնագոյնի մասին։ Ղազարը տեսել է կամ գէթ լսել է մի ձեռագրի մասին, որ «մագաղաթի վերայ գրեալ էր երկաթագրով, նօտրագրով զաւազանակերպ գրով»: Վերջին բառերը որ անհրաժեշտ ենք համարում ընդգծել, անշուշտ Ղազարի ժամանակ, գէթ վանական շրջաններում տարածուած տերմիններ են եղել, մինչ այն աստիճան, որ մի նուաւար անգամ անծանօթ չի մնացել նրանց և

երկու անգամ տեղ է տալիս նրանց իր յիշատակութեանց մէջ։ Այդ երեք տերմիններից մեզ յայտնի է միայն երկաթագիրը, մինչ միւսների մասին ճշտիւ ոչինչ չգիտենք։ Սակայն մենք որ այս վերջին երեք տարուայ ընթացքում պարապում ենք հայ ձեռագրերից մանրանկար զարդագրերի ընդօրինակութեամբ, հաւանական ենք համարում, որ նռանագիր և գաւազանակերպ գիր կամ գաւազանագիր ասելով Ղազարն ու իր ժամանակիցներն հասկանալիս լինէին մեր ձեռագիր մատեաններում տիրող երկու ոճ զարդագրերի—1) կենդանագիր, որի ծագումը մենք տեսնում ենք չորս աւետարանների չորս նշանական կենդանիների՝ մարդու, առիւծի, եզան և արծուի՝ մէջ, 2) մանուածոյ տառեր, որոնց հիւսուածքը, մանաւանդ հնագոյններում, իսկապէս յիշեցնում է արքունի կամ եկեղեցական գաւազանների ձևերը։ Բայց այս մասին աւելի ընդարձակ ուրիշ տեղ։

Ղազարն, իրա ասելով, երկու տարբեր աղբիւրներից է կազմել իր Հաւաքարանը: Առաջինը որպէս թէ գրուած է եղել Գագիկի քարտուղար Թումայի ձեռով, մագաղաթի վրայ, երկաթագրով նշանագրով և գաւազանակերպ գրով։ Երկրորդը՝ «գրեալ տիրացու Ներսէսէ». վերջինիս մասին պատմում է, որ գնացել է Երուսաղէմ ուխտի Յովակիմ պատրիարքի ժամանակ։ Յովակիմը Ներսէսին նուիրել է «արծաթէ բուրվառ մի արծաթէ ջահ մի քշոց մի»։ Աղթամարից վերջերս Մայր Աթոռ փոխադրուած իրերի մէջ կան Յովակիմի այս նուէրները, որից երևում է, որ Ներսէսի մասին պատմուածը անհիմն չէ. հետևապէս և երկրորդ աղբիւրի գրութեան ժամանակը պէտք կը լինի դնել Յովակիմի պատրիարքութեան շրջանում, այն է՝ 1775—1793 (հմ. Օրմանեան, Ազգապատում, էջ՝ 3176—7)։ Յիշուած աղբիւրներից ոչ մին ոչ միւսը մեր ձեռն հասած չլինելով, պարզ է, որ ներկայ Հաւաքարանիս արժէքն անհամեմատ մեծանում է։

Այժմ մի քանի ծանօթութիւն հրատարակութեանս առթիւ.

1. Ըստ մեր սովորութեան նախ քան ձեռագրի ըն-գօրինակութիւնը թերթահամարներ դրինք սկզբից մինչև վերջը, ինչպէս ընդունուած է բանասիրութեան մէջ։ Սակայն ձեռագիրն արդէն ունէր իջահամարներ՝ դրուած բուն իսկ գրչից։ Դժբախտաբար այդ իջահամարները չափազանց անկանոն էին։ Նախ՝ սկսւում են նախերգան-քից յետոյ, այնպէս որ մինչև նախերգանքի վերջը չկայ ոչ մի իջահամար. երկրորդ՝ մէջ են տրուած որոշ թուեր, օր. 21, 32, 60—89. երրորդ՝ որոշ թուանշաններ, անյի-շողութիւնից կրկնուել են, ինչպէս՝ 30, 46, 47, 48. վերջապէս 92-ից յետոյ իջահամար չկայ այլ ևս։ Մենք պարտք համարեցինք, ձեռագրի մասին լրիւ գաղափար տալու համար, հրատարակութեանս մէջ, մէկ կողմից՝ լուսանցներում յիշատակել արդէն գոյութիւն ունեցող իջահամարներն իրանց բոլոր թերութիւններով, միւս կող-մից՝ այնտեղից, ուր դադարում են իջահամարները, յի-շատակել մեր դրած թերթահամարներով։ Նախերգանքի թերթերին հարկ եղաւ նշանակել Ա., Բ, Գ տառերով։

Այսպիսով ընթերցողին հնարաւորութիւն է տրւում հետևելու և տեսնելու, թէ հրատարակութեանս ո՛ր էջը բնականի ո՛ր էջին է համապատասխանում։ Կարևոր դէպ-քերում զանց չի առնուած յիշատակութիւն ծանօթու-թեանց մէջ։

2. Ձեռագրիս մէջ կան զանազան գրիչներ։ Բուն Հաւաքարանի մասը, որ ստուարագոյնն է և նուաստ Ղազարի գրչին է պատկանում, մեծ մասամբ բոլորագիր և մասամբ էլ նոտրագիր է։ Մնացած գրիչներին, որոնք բոլորն էլ նոտրագիր են, իրարից զանազանել ենք A, B, C ևն տառերով։

3. Պահել ենք պատիւ (~) կիրառութիւնը։ Բացա-ռութիւն են կազմում այսինքն, ըստ և աշխարհ բառերը, որոնցից առաջինները, ինչպէս յայտնի է, փակագրով էին ներկայացւում հին ժամանակ, իսկ վերջինը մի առանձին նշանով, որ բաւական նման է հայկական խս (–) ձայ-նախաղին։ Զանց է արուած նոյնպէս թաւ նշանի գոր-

ծածութիւնը բաղաձայն ւ-ի վրայից և մակակէտը ի նախդրից առաջ։ Այս զանցառութեանց պատճառ ապրանական անյարմարութիւններն են, այնպէս մենք դրանց ևս տեղ կը տայինք մեր հրատարակութեան մէջ։

4. Նկատի առնելով կէտադրութեան վերին աստիճանի անկանոնութիւնը, ընթերցողին աւելորդ տաղտուկից ու շփոթութիւնից զերծ պահելու համար, կէտադրութիւնն համաձայնացրել ենք նախադասութեանց իմաստին, առանց այդ մասին ծանօթութիւններ տալու ստորև, մինչ ուղղագրական սխալները խնամքով պահել ենք կամ բուն գրուածքի մէջ, եթէ դրանով իմաստը չի մթագնած, և կամ դուրս ենք բերած ծանօթութեանց մէջ, եթէ սխալի ուղղումն անհրաժեշտ է համարուած որ և է տեսակէտով։ Օրինակի համար էջ 53-ում երկիցս պատահում է յաղթամա և յաղթամայ: Մենք համոզուած ենք, որ գրիչ Ղազարն այսպէս էլ արտասանել է, ինչպէս նմանօրինակ երևոյթ նկատելի է նաև այլ բառերի վերաբերմամբ, որ նշանակել ենք իրանց տեղում։ Սակայն մեզ անսովոր այս ձևը կարող էր ընթերցողին տարակուսելի կամ տարօրինակ թուել, ուստի և ուղղելով հանդերձ յաղթամարայ, ծանօթութեան մէջ երկու անգամն էլ նշանակեցինք, երկրորդին ընթերցողի ուշադրութիւնը հրաւիրելով սխալ կարծուած միևնոյն ձևի կրկնութեան վրայ, որով մատնանշած ենք լինում, որ սա ոչ թէ սխալ է, այլ զուտ ձայնաբանական մի կարևոր երևոյթ։ Բարեբախտաբար մեր Ղազար գրիչը այս կարգի արժէքաւոր «սխալ»ներ շատ ունի (հմ. նաև էջ՝ 61 ծան. ուրս, 62 ղարզար, 63 բաղտարսա՞ր բոլորի մէջ էլ սուլիչ բաղաձայններից առաջ մի ր զարգացած)։

5. Ծանօթութեան համար թուանշանները միշտ հարցի առարկայ բառից անմիջապէս յետոյ են դրուած. օր. էջ՝ 4. «և դուք[5] . . . .» ծան. 5) տող. նշանակում է որ տողամիջում գրուած բառն է միմիայն դուք առանց եւ։ Անհրաժեշտութեան դէպքում բառը կամ բառերը կրկնւում են ծանօթութեան մէջ։

6. Յայտնի է, որ գլխագրերն հնում, յատուկ անունների վերաբերմամբ, այն նշանակութիւնը չունէին ինչ որ այժմ, շնորհիւ այն հանգամանքի, որ հնում գոյութիւն ունէր պատիւը (˜), որ, ինչպէս բառի իմաստն էլ է բնորոշում, բռնում էր մեր այժմեան գլխագրի տեղը։ Այդ պատճառով էլ Հաւաքարանիս ձեռագրում պատահում ենք գլխագրերի յաճախ, ըստ մեզ, անտեղի գործածութեան, օր. զ նախդիրը գլխագիր. մինչդեռ զ-ին յաջորդող բուն յատուկ անունը գրուած է պարզ բոլորագրով։ Մենք այս դէպքում ևս մնացինք հաւատարիմ, ի նկատի ունենալով, որ գլխագրերի արդի կիրառութիւնն եթէ մէկ կողմից արդիւնք է հետևողութեան եւրոպական լեզուների, միւս կողմից շարունակութիւն է այնպիսի երկարատև տառամնումների, որոնց ներկայացուցիչներից մէկն էլ գործիս ձեռագիրն է։

7. Ընթերցողի ուշադրութեան ենք յանձնում մի շարք բարբառային և աշխարհիկ լեզուի յատուկ ձևեր ու դարձուածներ, որոնց նշանակութիւնը, մանաւանդ ներկայ դէպքում, մեծ է նաև պատմական տեսակէտից, օր. էջ՝ 15 դունե. յամէն=ամէն, 16 առեց, 17 ուսպա (պրսկ.—Թրք.), 18 յէնի, ևն։

8. Ի նկատի ունենալով, որ ձեռագիրս ընդհանուր առմամբ ներկայացնում է մի անվաւեր նկարագրութիւն պատմական անձերի ու անցքերի, համեմատութեան համար հարկ համարեցինք կաթողիկոսների ժամանակագրական ցանկից յետոյ, որով վերջանում է իսկապէս բուն ձեռագիրը, չհաշուելով Ղազարի յիշատակարանը, անմիջապէս աւելացնել մի այլ ցանկ, իր ծանօթութիւններով միասին, որ վերցրել ենք Կ. Պօլսի 1909-ի Ընդարձակ օրացոյցից։ Այդ ցանկը, արդիւնք առանձին խնամոտ ուսումնասիրութեան, աւելի է համապատասխանում իրական պատմութեան, որ պահուած է մասամբ Թովմա Արծրունու, մասամբ էլ զանազան ձեռագիր յիշատակարանների մէջը։

9. Ինչքան էլ մեր հրատարակութիւնը փոքր է ծաւալով, այնու ամենայնիւ նրա գործածութիւնն աւելի

դիւրին և հաճելի դարձնելու համար, վերջում աւելացրինք յատուկ անունների մի ցանկ ուսումնասիրողի գործը դիւրացնելու համար։

Սոյն դիտողութիւններից յետոյ աւելորդ չենք դատում յիշել մի կարևոր պարագայ ևս։ Ճիշտ է, որ, ինչպէս ընթերցողը կը տեսնէ բուն իսկ հրատարակութեանս ընթացքում, մեզնից առաջ ուրիշներ արդէն ուշադրութիւն դարձրել են ձեռագրիս վրայ և օգտուել նրանից։ Դրանցից յիշատակելի են յատկապէս նախ պր. Խ. Լեոնեան, որ Աղթամարի կաթուղիկոսութեան պատմութիւնը գրելու համար արտագրել է «սոյն գրքիս կարևոր մասերը», և երկրորդը՝ Օրմանեան Սրբազան, որ, օգտուելով նրա յօդուածներից (Բիւզանդիոն, 1900), յաճախ յիշատակում է Հաւաքարանս իր «Ազգապատում»ի մէջ։ Այն ինչ որ պր. Լեոնեանին նուազ կարևոր թուելով զանց է առած նրա արտագրութիւնն ու հրատարակութիւնը, մեզ, եթէ ոչ պատմական գէթ այլ տեսակէտներով, նոյնքան կարևոր երևեցան որքան նրա արտագրած մասերը։ Տեսակէտների այդ զանազանութեան արդիւնքն է ներկայ ամբողջական հրատարակութիւնը։

Խօսքս չկնքած պարտք եմ համարում յայտնել, որ, գործիս տպագրութիւնն իմ բացակայութեան առթիւ տեղի ունենալով, սրբագրութիւնն անձամբ կատարել չկարողացայ և յանձնեցի պ. պ. Սարգիս Զ. Թօփալեանին և Փագրիկ Ներսիսեանին, որոնց սիրալիրութեան հանդէպ յայտնում եմ խորին շնորհակալութիւնս հրապարակով։

ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ

1915 Թ. Դեկտ. 24
Ս. Էջմիածին

# ՀԱՒԱՔԱՐԱՆ ԱՆՈՒԱՆՑ

## ԿԱԹՈՂԻԿՈՍԱՑ[1]

---

Ա։ [2]Գահ երկնային՝ լուսապատար·
լիցիս և դու՝ սատեղաց շար·
Բամք անմարմնոց՝ վերին զօրաց՝
պատեն զքև՝ համատարած.
Ի հաննիւթ գոյացութեան.
կազմեցար մեզ՝ փայտ փրկուե֊ն.
Գոռն անարատ ըստ յեսայեայ՝
պատարագի մ՟ր սորա . . . . յ՝
Որ թագաւորն մեր գագիկ.
տիրապետե՟ց զաեղս անառիկ՝
շինեաց ՚ի Սմայ՝ վանք հրաշալի՝
երկնահանգէտ եկեղեց . . . . ի՝
Բամքն վեհից գումարեցա . Ն.
յայամիկ կղզոջ զետեղեցա . . Ն.
իբր զծաղիկ գարնան բուսա . Ն.
երկնառուղէշ ծառ բարձրացան.
տասն տասամբ քսան և երկ՝
ի թիւ արկա . . . . . . . . Ն.
յայամիկ կիտիս զլրումն ա . ռեալ

զ. զ. ա. մ. և է կայեան.

---

[1] Զ. վերնագիր չունի։

[2] Զ. Նօտրագիր Δ.—Ոտանաւորիս գլխագրերը կազմում են Գրիգոր անունը, որ անշուշտ ոտանաւորի հեղինակինն է։

## Բ– Նախերգանք սբ՞յ մատենիս

Ի ժամանակս գերափառ արքային գագկայ. իսկ զա՞մ յաղթուե՞ բանս զոր արարեալ էր. թէ բարեգործուի՞ թէ պատերազմ. թէ եկեղեցիս հաստատել. և նոյնպէս պայծառացուցանել։ Արդ ի կատարել նորա զա՞մ յաղթուե՞ գործն. յատկապէս հարկեցոյց ի մ՞ր քարտուղի[1] իւրոյ. պահանջէ ի նմանէ զբանս պատմուե՞ ն՞ր արկանել ընդ գրով. ըստ նախնեաց առակին զոր անէին հզօր արքայքն։ Իսկ անհուն գիտուի՞ն ամենազօրին ա՞յ՝ զոր առեալ էր բանիբուն վ՞րդպտին մերոյ ս՞րյն Թօմայի, որ էր նօտար կամ գրագիր մեծին արքային գագկայ. սա սկսաւ զա՞մ գործս բարեպաշտ արքային[2] արկանել ընդ գրով։ Նախ շինեաց զանառիկ բերդն ճարայու. նոյնպէս շինեաց ամուր բերդ մի յաստան քաղ՞քին. զկնի սորա մեծ արքայն

արկան

Բ፦ արկանէ զհզօր և յաղթուե՞ բազուկ իւր ի շինուի՞ն ամենազով սխրալի կղզոյն յաղթամարու. եւ շինեաց մեծ եկեղեցի մի. անուն նորա Ս՞բ յարուի՞. նոյնպէս շինեաց զտաճարն յերկնահանգէտ շքեղաշուք. և յոյժ պանծալի զոր ոչ բաւէ ոք զպատմուի՞ն ն՞ր. արկանել ընդ գրով. և անուն տաճարին Ս՞բ խաչ յորջորջեալ. Մանավանդ զգալ ա՞ր զէւորք կ՞թկոսին. եւ հաստատուի՞ն զոր արար զէւորք կ՞թկոս. Արդ յորդորեաց զթագաւորն և ասէ արքային պարտէ մեզ հաստատել զյաղթամ՞րն աթոռ ա՞մ հայոց. նախ զի ամուր է յա՞մ կողմանց երկրորդ հայաստան է. երրորդ արքայարանն է արծրունեաց. Այսպիսի խանդաղատական բանիւք յորդորէ զարքայն

[1] = քարտուղարի

[2] Զ. տղմ.

զագինն — և ճմլեցոյց աղէտ՞կ՞ն բանիւք զսիրտ հեզոյն զագկայ. Եւ արդ զի է մեզ զա՞մ բանս քննել և միւսանգամ կրկնել.

Այլ[1] արդ ես զազարս[2] զառածեալ մեզօք՝ ստաբազրեալ յա՞մ պատուիրանաց ա՞յ և զարտուղի սխալեալ ի յարքունակ[3] շաւղէն

իրքև[4]

Գ.– իրրև[5] զոլկար որ. Արդ մերոյին անկաա՞ր մասցս իրր զանատուն իմն խակակուխ խորհրդով ստո և անդ շրջիմ. ոչ գիտեմ ործվ և ո՞յր[6] կեամ. և իմս այսպէս անկարգ մնալով ի գործ նաւավարուե՞՝ պատահեցա ի կզզին յազթամարու և մտի ի շքեղափառ տաճարն Ս՞բ խաչին. նոյնպէս աղերսեցի[7] բազում բանիւք ի լուսարարէն, որոյ անուն Տ՞ր յովաննէս ճգնազգեաց վարդպ՞տ. և նա երաց զդուռն գրքատանն, և իմս նայելով զա՞մ գրեանս, զտի փոքրիկ գիրք մի ո՞ր զտեալ կայր[8] ի մէջ նորա գթիւ կ՞թկոսացն յաղթամարու, և զթագաւորին զագկայ, և զգաւն ա՞ր գէւորք կ՞թկոսին, և զհաստատութ՞ յաթոռս. մինչև ցա՞ր զաքարիայն որ նահատակեցաւ յօստան ք՞ղքին. նոյնպէս զտի՞ տետրեակ մի ի զաքարիայէն մինչև ցնիկողայոս կ՞թկոսն. Արդ առաջինն զոր ասացի մինչև ցա՞ր զաքարիայն, զարարմունս զագկայ և զթէմին յաղթամարու զոր[9] շնորեալ

էր

---

1 Ջ. շրն.
2 Ջ. ազմ.
3 իմն յարհունականն.
4 Ջ. իրեւ.
5 Ջ. իքեւ.
6 Ջ. ո՞յր = ինչի՞ համար, հմ. բրբ. ճօրի՞.
7 Ջ. յաղերսեցի. յ ջնջ. նշ.
8 Ջ. գիրք մի. ունէր (ջնջ. նշ.) ո՞ր զտեալ (նխպ. գրեալ) կայր
9 Ջ. զոր-ից յետոյ ջնջ. նշ. տես.

*Գէ՞ էր տ՞ր գէւորք դատանաւ[1] իւրոյ բազո՞մ եպ՞սոք արքային և իշխանօք յաղթամարայ. իսկ այն մագաղաթի վերայ գրեալ էր նշանագրով երկաթագրով, գաւազանակերպ գրով.* [illegible] . . . *
[illegible] . . . [illegible]

*Արդ այս[2] գրով[3] գրեալ էր զոր դժուարաւ ընթեռնուլ ոք կարէր, և ինձ պատահեալ այն տետրակին յոյժ ուրախացայ, և ընթերցայ. և տեսանելով հայրապետին՝ հարկեաց ի վ՞ր իմ, թէ գրեաց զսա այժմուս ժամանկի գրով, զի դիւրին լիցի առ ի ընթեռնուլ. Արդ յանձն առի ակամայ, զի ոչ էի բաւական այդմ բանի. Գրեցի զերկոսին տետրակունք ի վայելուչ գերերջանիկ Տ՞ր յոհաննէս կ՞թկոսին, եւ բարունի յովաննէս վրդպ՞տին որ մականուանբ աղաջան ասի, եւ զհետ նոցա գալած կ՞թկոսաց.*

*Արդ խնդրեմ ա՞ծասէր ընդերցողացդ, յիշեցէք և ողորմի ասացէք անպիտան[4] Ղազարիս, որ եմ գծօղ այս տետրակիս և դուք[5] յիշեալ լիջիք ի ք՞սէ ամէն.*

---

1 = մատանա՞ւ *արդեօք թէ՞* դատաստանաւ.

* *տ. գրքի վերջում տիպ Ա.*

2 Ձ. *տղմ.*

3 գրով *-ից յետոյ ջնջ. նշ.* գլ

4 Ձ. անպիտան *-ից յետոյ, ջնջ. նշ.* Պար

5 Ձ. *տղմ.*

# Ա.

1. [1] Ցաղագս Շինուե՞ն Աղթամարայ. Եւ թէ ոյք ոմանք յառաջ քան զձեռնարկելն թագաւորին ի յաղթամարս էին բնակեալ իբրեւ գխուղ մի ոչինչ գործեալ:

*Եւ ա՛րդ մեր բաղձ՞ լի[2] սիրով զգեղեցիկ պատմութի՞ և անվրէպ յայտնեցից որ ինչ ի սկզբանց անտի շինուե՞ աշխարհիս հայոց. Յետ աշտարակին որ բլաւ[3] և լեզուք բաժանեցաւ. Եկն Հայկ և բէլ բնակեցաւ ի հայոց ձոր,[4] և ազգեցութ՞ն ա՞յ շինեաց զմեծ բլուրն անառիկ բերդ ի յահէն թշնամեաց. Եւ ե՞կն[5] ի վ՞ր ն՞ց նեփրովթ[6] և այլազգիք. եցոյց նմա տ՞ր ի յանուրջս երազի աստղ նման աղեղան. յայնժամ արար աղեղ և նետ. այնու սատակե՞ց զօրսն այլազգեացն[7] և փախստական*

*արար*

2. *արարին. և նորին զարմից մնացին ի բերդն ա՞ծաշէնա՛. Եւ յետ ն՞ր եկեալ յասորեստանեայց[8] կին մի վավաշոտ շամիրամ. ի նմանէ յայլս և ն՞ց շատ շինուի՞ արարեալ յերկիրս մեր, զոր աչօք մե-*

---

[1] Ձ. *այստեղից սկսւում է բուն գրուածքը, որի վերնագրերը կարմրադեղով են և նոտրագիր. իսկ մնացածը, որ բուն պատմութիւնն է, գրուած է սև թանաքով և բոլորագիր. առաջին տառն, ինչպէս այստեղ* Ե, *միշտ թռչնագիր է.*

[2] Ձ. *Այս չորս բառերը կրմ. են.*

[3] = բեյլու? *թէ՞* փլու?

[4] Ձ. ձոր-*ի վրայ տղմ. կրկին անգամ նոտրգ.* ձոր

[5] = եկին

[6] Ձ. Նեփրովթ *գրուած է տղմ. նոտրգ. Նխպ. եղել է* սամիրամ, *որը ջնջել են.*

[7] Ձ. Ն *տղմ. յետոյ գրուած.*

[8] Ձ. ես *տղմ.*

*բօք տեսաք կամ տեսեալ եմք։ Եւ գնացին հեծելօք աւերել զաշխարհն միջամլետոյ և հեռաւոր աշխարհս մինչև ցկղարջ և շուշիթացիս, և լերամբն կօվկասու, և[1] յահիդ մինչև ի մուտմն գաղայ, և ընդ տայսատմն, և ընդ ա՞մ հիւսիսակ՞նս և ընդ յարևելս, և հետխտաս գնալով տեսաք զզօրծս քաջացս և նախնեաց։ Սոքա զոր յիշեցաք թագաւորին մերոյ[2] զազկայ։[3] ծառայ չը վայելեն ոչ[4] ի շինուե՞ն կողմանէ և ոչ ի թագաւորուե՞նս։ Եւ յառաջ քան զայսոսիկ ի Դաւթա[5] սախուանոյ, և յաւշամայ որշտունւոյ, և ի բագավրանայ սսի ատեալ շինուի՞ յաղթամարայ կղզոյջն[6] Սա միաբանեցաւ ընդ աստոցն և գնաց*

*Յ. գնաց ը(=ընդ ?) յերկիրն պաղեստինացւոց և գերեաց երկիրն առ հասար՞կ բերեալ ի բաբիլոն. իսկ ընտրեաց ի ն՞ցէ զգեղեցիկս ընդ իւր բերաւ ի յերկիրն հայոց այսինք զաւաշ որ ուշտոնինք յորջօջի. և քանզի իշխանի անո՞ն ուշամ էր, վ՞ս այն սսեն զաւաշ կամ ուշտոնիք,[7] բնակեց՞՞ւց[8] ի կղզին յաղթամարու հանդերձ[9] հիւրկանաւ քահանայիւ զոր եսայի մարգարէն բողոքէ. ազդ արարէք սանս սաքանազայ որդւոցն հայկայ. քանզի արամ միաբանեցաւ ընդ ստորոցն. սա սկիզբն արար շինուե՞ն հրաշալի կղզոյն.[10] զոր յայտնապէս ծանուցանէ մովսէս*

---

1 Ձ. եւ-ից *յետոյ գրուած և ջնջուած* յաղիբ (բ-*ի վրայ տող.* հ).
2 Ձ. մերոյ-ից *յետոյ . . .*
3 Ձ. *կրմ.*
4 Ձ. ո *կրմ.*
5 Ձ. ի բաւբայ (*առաջին* բ-*ի վրայ տող.* դ)
6 = կղզւոջն
7 Ձ. ե *տող.*
8 Ձ. *նխպ.* բնակեցան. բնակեց''ւց = բնակեցոյց.
9 Ձ. հանդերձ-*ից առաջ, ջնջ. նշ.*, զօր կս.
10 Ձ. կղզոյն (Ն-*ի գլուխը գծով ջնջուած*).

քերթողահայր մեր ի պատմուե՟ն[1] խրում. ուրեմն[2] ճշմարիտ է բանս պ՟ատմուե՟ն[3] մերոյ. սոքա բնակեցան յաղթամար. իսկ բարեպաշտ քահան՟յն հիւրկայն նախ շինեաց տաճար ա՟յ, յետոյ արարին իւրեանց հիւղ, զի[4] լիցի ն՟ց բնակուի՟ ի ձըմերան եղակին (=եղանակին). արդ

4. Արդ[5] ա՟ծապաշտուի՟ ծաղկեցաւ յերեելի կղզոջ կոչեալն յաղթամար, մինչև հաւատաց Աբգար մեծահաւատ արքայն մեր, որ ախտացե՟լ էր. հաւատաց մարգեղուի՟ անել բանին հօր ա՟յ. և յետ[6] համբառնալոյն ք՟ի ա՟յ մերոյ յերկինս = ապա[7] յղեաց պառքեալն իւր առ մեզ այսինքն[8] զԹաթէոս և բարթուղիմէոս. և եկին մկրտեցին զարգար Թագաւորն. և սրբեցաւ ի բորոտու՟է, Յայնժամ[9] հրամայեաց արքայն ընդ ա՟մ հայոն քարոզել զաւետարանն ք՟ի, եկին առաքե՟լքն[10] ռշտունեաց,[11] Եւ եմուտ ս՟րն[12] Թաթոս յաղթամար կղզին. եւ աւետիս[13] հրէիցն որք բնակեալ էին անդ, Եւ աւէ ողջոյն ձեզ, ո՛վ հրէայքդ և ժողովուրդք մեծ քահանային հիւրկանու և գերեալքդ[14] ռաշամա. քանզի ապա-

1 Ձ. ի պատուե՟ն
2 Ձ. ուրեմ
3 Ձ. վերջին տառը ոչ բոլորովին Ն ի է նման, ոչ էլ ս ի.
4 Ձ. զի՟
5 Ձ. Ա կրմ.
6 Ձ. յետ լուսանցքում.
7 Ձ. ապա-ից առաջ վերջակէտ.
8 Ձ. այս (և յաջորդ տողում) ինքն (ք տղմ.)
9 Ձ. ժամ տղմ.
10 Ձ. վերջին ք տղմ,
11 Ձ. ռշտունեաց-ից յետոյ, լուսանցքում, նոտր գաւառն.
12 Ձ. տղմ.
13 Ձ. տղմ.
14 Ձ. ք տղմ.

տիչն[1] ձեր մեսիայն, որ է[2] ք՞ս զոր զուք ակն ունիք զալստեան ն՞ր սա եկն ի քաղաքն զաւթի, զոր ինչ վ՞ս իւր գրեալ էր կատարեաց, և ապա

5. ապա համբարձաւ յերկինս և զմեզ[3] առաքեաց ի հայաստան քարոզել զանուն ն՞ր. և ապա հարցին ցնա հաւատաց Աբգար Թագաւորն մեր[4]. յայնժամ ասէ առաքե՞լն այն հաւատարիմ իշխանն իմ բագարատ Եւ իբրև[5] լուաւ բագարա՞տ զլուր մեսիային և զհաւատալն արքային, մանաւանդ բժշկուի՞ն ն՞ր, որ անողջանալի էր, ապա հրամայեաց ամենեցունց[6] լսել քարոզուե՞ն Թաթէոսի Յայնժամ մկրտեցան բնակիչքն յաղթամարու. և զկնի ս՞ր ս՞րն Թաթէոս իւր ձեռով փորեաց զարձանն խաչաձև կնքեաց ս՞ք մեռոնաւ,[7] զոր բերեալ էին[8] և[9] ունէին ընդ ինքեանս[10] հանապազ. եւ բազումն խաչս ձևացուցին, և օծանէին, և հարկանէին զբևեռս երկաթիս. զի[11] նշան ս՞ք խաչերացս էր այս.[12] իսկ մեծ խաչն զոր գրեաց ի վ՞ր[13] վիմին, ունելով զդէմն[14] իւր ի կապան ոստան քաղ՞քին. եւ մնացին բազում աւուրս անդ. ոչ սակաւ եղև

---

1 Ձ. Ն նոտրգ.
2 Ձ. տղմ.
3 առաջին. զ տղմ.
4 Ձ. տղմ.
5 Ձ. ԲՐԵՒ.
6 Ձ. ԱՄԵՆԵՑՈՒՑՆ
7 Ձ. ՈՆ տղմ.
8 Ձ. ԻՆ (ոչ ԷԻՆ) և տղմ.
9 Ձ. տղմ.
10 Ձ. տղմ. և նոտրգ.
11 Ձ. ԶԻ՞
12 Ձ. տղմ.
13 Ձ. Ի Վ՞Ր նոտրգ. և յետոյ գրուած Վ՞Ր տղմ.
14 Ձ. զ տղմ.

6. *ոչ սակաւ ուրախացան. բազարտունիք*[1] *սոյնպէս*[2] *աղաչեցին առաքելոց յայտկապէս*[3] *զիւղ*[4] *օծու՟ն անդ օրհնեսցեն և մի այլ տեղ, քանզի*[5] *առաքեալքն յառաջ ասացին, թէ ՝պարտ է մեզ օրհնել զիւղն։ Եւ*[6] *իբրև տեսին անսպառ հաւատս ն՟ց, և ապա*[7] *սկսան*[8] *յերկոյեան ժամու սկիզբն առնել պաշտաման. և իբրև կատարեցին զաղօթս կանոնաւորս որպէս օրէն էր և ետին (=եղին) զտուփ*[9] *ս՟բ իւղին յառաջի վիմին զոր խաչ ձևացուցեալ էին*[10] *մեծաձև քանդակիւք. և ի լուր ժողովրդոց բարձրաձայն*[11] *երգով գովէին զա՟ծ և զտուօղ այնպիսի շնորհացն.*[12] *յորժամ կատարեցին*[13] *զխորհուրդս ամենաշնորհ մեռոնին,*[14] *ապա ընտրեցին մի ոմ (=ոմն) ի ն՟ցէ*[15] *ընդիր վարուք ձեռնդրե՟ց ն՟ց քահանայ,*[16] *և ապա ողջոյնեցին զնս՟ և ելալ գնացին առ սան՟դրուկ թագաւորն*[17] *աւետարանեցին ընդհանուր*[18] *աշխարհս հայոց. յետոյ նահատկեց՟ն*

*ի սա*

1 Ձ. ի տղմ.
2 Ձ. սոյնպէս-ից յետոյ ջնջ. նշ., աչացեաց
3 Ձ. 2-րդ յ տողից ցած.
4 Ձ. զիւղ-ից յետոյ ջնջ. նշ. օրհն
5 Ձ. քան զի
6 Ձ. կարմ.
7 Ձ. առաջին ա տղմ.
8 Ձ. 2-րդ ս տղմ.
9 Ձ. զտուբ, բ-ի վրայ տղմ. փ
10 Ձ. տղմ. նօտրգ.
11 Ձ. բարձրայն, 2-րդ ր տղմ.
12 Ձ. այնպիսի նորհացն
13 Ձ. տղմ. և նօտրգ.
14 Ձ. տղմ. և նօտրգ.
15 Ձ. ի նց՟է-ից յետոյ ջնջ. նշ. ընդրեցին
16 Ձ. յ յետ. աւլ.
17 Ձ. թագաւորն-ից յետոյ ջնջ. նշ., ա՟եսանե
18 Ձ. դ տղմ.

7. Ի սանտարկոյ գոռոզ արքայէն[1].

Իբրև լուա՞ն ն՞ք[2] զմահ ո՞ր առաքելոցն շատ ողբացին. Եւ արդ զի՞նչ[3] առեմ. յետ փախճանելոյն[4] արքային արդարու և նահատակուե՞ն ո՞ր առաքելոցն Թագաւորեաց որդին Աբգարու, վերստին տարածեցաւ կռապաշտութի՞ յերկիրս մեր մինչև ցլուսաւորիչն և Թագաւորութի՞ն տրդատայ, իսկ քաղաքումնիք մնացին յա՞ծ՞պաշտ ի մէջ կղզոյն յանաոփն յաղթամար՞յ.

Եւ[5] զկնի[6] այսքան ամաց անցանելոյ և լուսաւորիչ[7] ո՞ր հայրապետն[8] գրիգոր,[9] մանաւանդ տրդատ[10] որ երկոքեան իբր ամոլ եզանց հերկեցին զապառաժեցեալ ազգն հայոց, լուսաւորեցաւ երկիրս մեր. հաւատք ա՞ծային ընծուղեց՞ւ, պակսեալ անդաստանս մեր բուսաւ հասկ հաւատոյ. այսքան բաւական վ՞ս առաջնոյս.

Դ՞րձցուք[11] ի վ՞ր պատմուե՞ս մերոյ[12] որ ինչ եղև ի կղզին[13] յաղթամարու ի յաւուրս

Թագաւ.

8. Թագաւորուե՞ն յուլիանոսի ուրացողին ք՞ի արար խաղմն ընդ պարսից. յորժամ երթար ի վ՞ր պարսից.

---

[1] Զ. այքայէն
[2] Զ. տղմ. նօտրգ.
[3] Զ. զինչ
[4] Զ. փանանելոյն
[5] Զ. կրմ.
[6] Զ. ի նօտրգր. յետ. աւլ.
[7] Զ. բառի վերջին մասը ջնջուած և ուղղուած. Թերևս նաև լուսաւորեաց կամ լուսաւորելոյ
[8] Զ. Նխպ. հայրապետին, ի ջնջուած.
[9] Զ. Նխպ. գրիգորի.
[10] Զ. Նխպ. տրդատայ
[11] Զ. Դ կրմ.
[12] Զ. ս և ոյ յետ. աւլ. ոյ տղմ.
[13] Զ. Նխպ ի կղզոյն

*նկարեաց զպատկեր իւր հանդերձ պատկերին դիւաց, յղեաց առ արքային մեր տիրանս Իսկ տիրանայ առեալ զպատկերն այն եդ եկեղեցին,[1] զի[2] պաշտեսցին ամենեքեան։ Իբրև եմուտ ո՞ր[3] հայրապետն[4] յուսիկ,[5] ի վեր հայեցաւ եւես զպատկերն յուլիանոսի եւ հանդերձ դիւաց պատկ՞րին. յայնժամ առե՞լ ընկէց յերկիր և խորտակեաց զնա. և ասէ Թագաւորի պատկերին երկիրպագանեմ թէ բարեպաշտ[6] թէ կռապաշտ։ Իսկ եւ[7] երկիր ոչ պագանեմ. չարն[8] յուլիանոս եւ խնդրեաց ի տիրանայ զօրք զի երթիցեն ընդ իւր պատերազմ ի մ՞ր պարսից։ Այսմ տիրան[9] յղէ նամակ իւր ի ոշտմնեացն գաւառն[10] ի կղզին յաղթամարու առ քաջ իշխանն[11] զուրայ տէր յաղթամու (=յաղթամարու). իսկ նա ժողովեաց զօրս բազում[12] գնացին օգնուէ՞ն յուլիանոսի. և իբր*

**9.** *և իբրև[13] մերձ եղեն բանակին յունաց, . . . . . . . . . . . .[14] զունդ զուրայի[15] հետամուտ եղև[16] պատառնեակ մի. իբրև եսես զուրայ,[17] եհարց ու-*

---

1 Զ. եղ *տղմ.*

2 Զ. զի՞

3 Զ. *տղմ.*

4 Զ. հայապետն (ն *տղմ.*)

5 Զ. յուսիկ *տղմ. Նխպ.* իսահակ

6 Զ. բաեպաշտ

7 Զ. *տղմ.*

8 Զ. չառն. *վրան տղմ.* դիւաց (= չառն դիւաց ?)

9 Զ. *Նխպ.* տիրանայ.

10 Զ. *տղմ. նօտրգ.*

11 Զ. *վերջին* ն *յետոյ աւելացրած.*

12 Զ. բազում*-ից յետոյ, ջնջ. նշ ,* գնին.

13 Զ. եւ բրեւ.

14 Զ. *այստեղ կէս տող ջնջել են բառերի վրայից թուղթ կպցնելով.*

15 Զ. *մի տող պարապ թողած.*

16 Զ. եղեւ *տղմ. նօտրգ.*

17 Զ. *լուսանցքում նօտրգ.*

տե՛[1] գաս, ո՛յ քաջ, նայ[2] ասէ. առի յարքայէն ձեր տիրանէ։ Ջուաայ ասէ. զի՞նչ[3] կայր անդ. ապա սկսաւ պատմել բանս[4] բոթալի. ո՛վ քաջդ իշխանն իմ զուրայ, տէրդ[5] յախթամ՞րու. այսօր տիրան նահատակեաց զհայրապետն յուսիկ[6] զանիւ և հարուածով վ՞ս պատկերին յուլիանոսի։ Ապա սկսաւ զուրայ ողբալ դառն արտասուօք, առեալ զօրս իւր հետս դարձաւ։ Իբրև լուաւ տիրան, թէ դարձաւ զուրայ, առաքեաց այլ զօրական.[7] կողոպտեցին[8] զտուն զուրային որ էր յաղթամար. նոյնպէս և այլ բնակիչք յաղթամարու, որք էին անդ. զոր գրէ մովսէս խորենացին ի պատմուե՞ իւրոյ յաճախ բանիւք. իսկ եթէ ոչ[9] հաւանիցէ ոք պատմուե՞ս[10] մերոյ զճառս մովսէսի

10. մովսէսի յաճախ ընդերձիր լիովին գրեալ կայ ի պատմուի՞ն[11] զուրայի[12] . . . արդ սոքա[13] էին տիրօղ անառիկ կղզոյն յաղթամարու մինչև[14] յաւուրս մեծի արքային գագկայ, որ քաջ խորին իմաստութ՞ն իւրով արար բազում հաղթուի՞ն, մինչ ցանկային այլազգիք[15] քաջուե՞ ն՞ր,[16] մանաւանդ խորին իմաստուե՞ ն՞ր։[17]

---

1 Ջ. ուսի
2 Ջ. = այն ժամանակ. ու. TO, արեւմտն. Gk.
3 Ջ. զինչ
4 Ջ ս տղմ.
5 Ջ. դ տղմ.
6 Ջ. Նխպ. Իսահակ.
7 Ջ. զօրականն-ից յետոյ գրուած և ջնջուած զի՞.
8 Ջ. Նխպ. կողոպտեն.
9 Ջ. տղմ և Նօտրգ.
10 Ջ. ս յետ. աւլ.
11 Ջ. պատուի՞ն
12 Ջ. այստեղից մի տող պարապ.
13 Ջ. սոքա վերջում ]
14 Ջ. մինչեւ-ից առաջ վերջակէտ և Մ կրմ. գլխագիր.
15 Ջ. իք յետ. աւլ.
16 Ջ. ն՞ր տղմ. յետ. աւլ.
17 Ջ. ն՞ր տղմ. յետ. աւլ.

*իսկ յայմ (=յայնմ) ժամանˆկի Թագաւորն[1] էր հայոց[2] սմբատայ[3] որդւոյն այբասայ. և քանզի սմբատ տիրէր հայոց, իսկ յորժամ լուաւ Թագաւորն պարսից զհանբաւ քաջուե̃ գագկայ, առաքեաց զոստիկանն իւր[4] ուսափ որդի ապուսաճա ունելով ընդ ինքեան զթագն արքայական՝ ականակապ մարգարտով ոսկեզօծ ընդելուզեալ. յանդիման ա՟մց եդ ի գլուխ գագկայ և կոչեաց բարձրաձայն. ով գագիկ Թագաւորդ, դու լիցիս[5] տիրօղ*

*հայոց*

**11.** *հայոց աշխարհին.[6] էր Թուին հայոց գ՟ճ՟կ՟ը՟, ի հայրապետուե՟ն տ՟ն յովհաննիսի, ժ՟զ ամի հայր՟պ՟տուե՟ն ն՟ր.[7] ընբռնեցաւ սմբատն գագիկ ճոխանա՟. և պսակեցաւ Թագիւ արքայակ՟ն ի յոստիկանէն յուսափա, զոր ճշմարտիւ պատմէ սամուէլ պ՟տմագիրքն։*

*Իսկ[8] գագիկ յորժամ ընկալաւ զԹագն արքայականն, առեալ զօրս իւր եկն երկիրն վասպուրկ՟ն[9] բնակեցաւ անդ։ Եւ եղև ուրախուի՟ գաւառիս մերոյ ոչ սակաւ. ապա շրջելով վ՟ս սբօսանաց ընդ ա՟մ գաւառս[10] վանայ, զի երկիրն բարեխառն էր, յոյժ հաւանեցաւ արքայն։ Յորժամ[11] եկին ի ոստան քաղաքն, նահանգն ուշտունեաց, ի տեսանել արքային[12]*

---

1 Ձ. Ե յետ. աւլ.
2 Ձ. տղմ. նօտրգ.
3 Ձ. տղմ. պ-ի վրայ գրած բ, իսկ ս-ի վրայ՝ թ
4 Ձ. տղմ. նօտրգ.
5 Ձ. ս յետ. աւլ.
6 Ձ. տղմ.
7 Ձ. տղմ.
8 Ձ. շրն. Ի կրմ.
9 Ձ. բ-ի վրայ, տղմ. պ
10 Ձ. ւա տղմ.
11 Ձ. Յորժամ-ից առաջ իբ ջնջ. նշ.
12 Ձ. ր տղմ.

զկղզին յաղթամարայ եղև երկրորդ ուրախութի՛ զագկայ, հրամայեաց իշխանաց մտանել ի կղզին յաղթամարու տեսանել, թէ

**12.** թէ զիարդ է կամ որպիսի է. և ի մտանել արքային ի վայելուչ կղզին[1] յաղթամարու նայեցե՛լ ի տեղին, որ անառիկ էր յա՛մ կողմանց[2] ծովով շրջապատեալ, զուարճացաւ սիրտ արքային։ Եւ ասաց թէ պարտ է մեզ[3] զաղթամար ամրոց շինել աշխարհի՝ ի հինից թշնամեաց ի յետ ժաման՛կաց, որ լինի ամրոց ա՛մ քրիստոնէից և անառիկ։ Ձեռն արկանէ հիմնարկել զնա ահեղ և զարմանալի հիացմամբ։ Հրաման տուեալ[4] բազում արուեստաւորաց և անթիւ մարկանց (=մարդկանց ?) հատանել զքարինս ծանունս և զժուարակիրս ընկենուլ ի յատակս ծովուն անհնարին խորու՛ն։ Եւ ժամանակաւ ինչ այսպէս ջան յանձին կալեալ[5] մեծի արքային. և յանկարծակի[6] եկն եկաց կանկնեցաւ քարայատակն,[7] պարիսպն կանգուն, և՛, ի վ՛ր բարձրացեալ մկան

**13.** մկանց ծովուն։ Որ մտացն աչօք իբրև ի ցամաքի մարդ չկարէր այնպէս ի շար և ի տողն հաստուի՛ յիմանալի եւ[8] (?) էր մանուանդ զվիմաց կարգն, յորոյ[9] վ՛ր լար եղեալ ձգէ զպարիսպն շուրջանակի, իբրև ձի արշաւանօք հինգ։ Եւ պ՛րսպն[10] է հրաշակերտ, ահեղակերպ, բարձրաբերձ, լայնանիստ[11]

---

1 Ձ. կղզինն
2 Ձ. տղմ.
3 Ձ. տղմ. նոտրգ.
4 Ձ. տուեալ-ից առաջ տա ջնջ. նշ.
5 Ձ. կալեալ-ից առաջ, ջնջ. նշ., կալանե.
6 Ձ. ր տղմ.
7 Ձ. քարա յատակն
8 Ձ. եւ. նոտրգր. և յետոյ գրուած.
9 Ձ. Յորոյ. Յ կարմ. և իրանից առաջ վերջակէտ.
10 Ձ. Ն տղմ.
11 Ձ. լանանիստ

յրգամամբք (= բրգամբք) և բարձրացեալ աշտարակօք զարդարեալ և անկիւնաւ՞ր խորանանման, տախտակաձև յինքեան ունելով գահոյք սրօսանաց. յորում հանդերձ որդւովք և ազատակուտ զօրօք միշտ ուրախանայր արքայ. և զպարըսպի գլուխն հաստատե՛լ ի կիրճս դժվարամածս քարանձաւին[1] յիրար կցեալ նման տան ՚ի շրթունս խորահատակ հիմանց ծովուն. դնէ զաներ անհաւորմատեսս, հաստանեղ

**14.** հեղոյս, բևեռապինտս. որով և զմասն ինչ ծովուն ի կզզին ի պ՞րսպին ի ներս առին. Եւ բազ՞ում նաւ յօրինեցին և խաղաղ նաւահանգիստ, բարձրագոյն հրաշակերտաց քան զաղէկսանդրին ի մակեդոն քաղաքի. Եւ որպէս ինձ թուի, նաև յամէն մարդու, որ տեսե՛լ էին զաղէքսանդրի[2] շինուածն, սորա յաւելի[3] է ՚ո ապատիկ քան նորայն զարմանալի. Իսկ շամիրամա մեծ գետ մի քան զհորգամու ի վարագա սարի ներև (=ներքև), անցոյց որ երթա ներքև Վանայ. ևս զերրդն վանայ քաղաքի[4] բազ՞ում քարէ տուն փորեց ի մէջ ն՞ր և պարսպեց, որ կայ մինչև ցայսօր. զի ն՞ք ի վ՞ր ցամաքի արարին, իսկ զադին ի մէջ մեծ ծովուտակն, որ յիացուա զմարդն[5] կու պատէ. Եւ հրաման տուեալ արքայն յա՞մ աշխարհէ ժողովել զրազումս[6] եպիս

**15.** եպիսկոպ՞ց և վրդապ՞տաց, քան՞յից և ժողովրդոց, ազատաց և ռամկաց գիտուն մ՞րդկանց. Եւ եկին բազում մ՞րդիկ. արքայն սաէ, թէ, եղբայրք, ես ս՞քանչեալ եպիսկ՞պոք իմաստախոհ վարդ՞պետք,

---

1 Զ. առաջին Ն տպ.
2 Զ. զաղէքսաանդրի
3 Զ. ի յետ. աւլ. նօտրգ.
4 Զ. Բաղաքին. Ն ջնջուած.
5 Զ. Ն տպ.
6 Զ. ա յետ. աւլ.

*կամիմ զկզզիս զայս շինեմք տեղ քան նոյեան[1] տապանն, զի ի յետ ժամանակաց ի բազմանալ տաճկաց, թէ զան ի վ՟ր հայոց, փախեն և մտանեն յաղթամար ի ձեռաց անօրինաց, ամրանան այս կղզին և ազատին ա՟վ.*

*Ցառաջ[2] եկաց ղուկաս վ՟րդպտն և տ՟ր մովսէս եպ՟սն հանդերձ ա՟մ զօրօքն, որ եկեալ էին ի տես թաղաւորին, և ասացին. բարի և իմաստուն խորհուրդ ես արարեր. տ՟ր ա՟ծ կատարէ զխնդիրս քո. եւ ամէնքս աղաչենք[3] զքեզ որ զէտ բանըդ աննես քեզ յիշատակ մինչև ի կատարած աշխարհիս. եւ քեզ ա՟ծ ողոր*

*մի*

**16.** *ողորմի ասեն և քո ծնօղացն որ[4] յամէն աշխարհէ զան մտանեն յաղթամ՟ր ազատին ի ձեռաց այլազգաց[5].*

*Իբրև լուաւ թ՟գ՟ւրն զբանս[6] որ ասացին ե՟պսքն վ՟րդք և ա՟մ ազատորդիքն, յոյժ ուրախացաւ թագաւորն. եւ հրովարտակ առաքեաց յ՟ամ աշխարհաց զալ բազում արուեստաւորք և ճարտարք,[7] և բազում ամրոխիւք. Ցայնժամ առեց արքայն զլար ճարտարուե՟ ի յիւր ձեռն հանդերձ ա՟մ վ՟ր՟դ՟պտօք. եւ ասաց թագաւորն. ի ծովու խորունդ տակն ձգեցէք, զհիմն յիրար կցեցէք. և այնպէս արարին, բազում արուեստով ի ծովու մէնջ (= մէջ) քար և[8] կիրն՝ խիճն. ես շիտակու՟ի էր անեղ և զարման՟լի.*

[1] Ձ. Ե և երկրորդ Ն տղմ

[2] Ձ. շրն.

[3] Ձ. նախնական ձևը անորոշ, հաւանօրէն աղաչ(եց)ինՔ.

[4] Ձ. ու-ից յետոյ յե ջնջուած.

[5] Ձ. տղմ. նօտրգ.

[6] Ձ. ս տղմ.

[7] Ձ. նխպ. արուեստաւորՔ և ճարտարՔ, օ-երը ջնջուած. հմ. յաջորդող ամբոխիւՔ գործիականի հետ.

[8] Ձ. եւ-ից յետոյ կար ջնջ. նշ.

ևսկ ի հրէու, ի չիրազու, ի յաղքրամմ, յանկլուրիոյ, ի սատանրօլմ, ի տրապիզոնմ, ի բաղտադմ, ի մարաց և յասորոց եւ յա՟մ կողմանց եկին[1]

**17.** **Բ.**

եկին[2] ճարտար՟պետքն[3] յա՟մ կողմանց. Գ՟Ճ՟Մ՟ ճարտարապետ ուսթմ էր, Ռ՟ ու Ե՟Ճ՟ աշակերտ էր, Թ՟Ճ՟ քար կտրող էր. Գ՟Ռ՟ ձեռընտու էին, Է՟ նաւ էին, Դ՟Ճ՟ կարդաւորք էին, թող զթագաւորի զօրքն, որ ի համար չէր, և գիշեր ու ցորէկն ի բուն կուբանէին։

Այս[4] ի Ե՟ տարին լմնցան զպարիսպն. անհուն բարձրութի՟ն ն՟ր էր գիմաց պալին, Կ՟ կանգունս Եւ պայծառացաւ, բարձրացաւ շինուի՟ քաղաքին աղթամարու տաւել քան զառաւել պայծառ և վայելուչ, ըստ արժանի թագաւորանիս[5] (=թագաւորանիստ?) արքայական և յիշատակ անջինջ,[6] զագարելով (=զարգարելով) շուկայս և զարս զարատանաց, և զարպասնէք և զահս ըստ գահից տէրութե՟ց. և բաղ ու պաչայ (=պաղչայ) և պարտէզս բուրաստանե՟ց և ծաղկողցաց (=ծաղկոցաց), արոշեալ հոգիասս։

Զոր վաղվաղակի[7] ածեալ[8] ի կա

տ՟րւմ

**18.** ի կատարումն հասուցանէ զա՟մ. և ծառատունկս բազում զոր առոգե՟լ արբուցանէ[9] զասա խնամքն ա՟յ

---

1 Զ. եկին-ից յետոյ սար ջնջ. նշ.
2 Զ. եւ եկին.
3 Զ Ն տղմ.
4 Զ. շրն.
5 Զ. ս տղմ. նօտրգ. յետ. աւլ.
6 Զ. Ջ րդ Ն տղմ.
7 Զ. առաջին դ տղմ.
8 Զ ի ածեալ
9 Զ. առոգել արբուցանէ.



A 111/455

Եւ[1] հրամայեաց թ՞գւրն ա՞մ վարդապ՞տցն, որ տաւէլ ճարտարապետ և իմաստուն և հանճարեղք[2] էին, թէ պատ (= պարտ) է մեզ շինել տաճար մի վայելուչ քառասուն կանդուն. լէնքն և յէրկէնքն չարսուն.[3] եւ պատի լէնքն դ՞ շէնք լիցի.

Ասեն[4] ճարտարապետներ. խիստ բարի է, թ՞գւր, ա՞յ յաջողու՞ք և քո թոլուաթովդ զինչ[5] թագաւ՞րի կամքն է, այնպէս շինենք. Եւ սկսան արկանել զհիմն տաճարին ի մեծամեծ քարանց ի վ՞ր ժ՞ր սիանց. արճիճ ու պղինձ ու սպինտրօ հալեցին հիման մէնջ լցին ի հետ բոլխտին, որ պատն ուր ուր քան զպօղպատ կու լինէր ի հմէմ մինչ ի գլուխն. այնպէս էր ի թախչս կազմեալ.[6] և ոչ էր տեսեալ աչք մարդոյ այնպէս

19. այնպէս շինուածք, միթէ սողոմոնին լինէր քան զաա աւելի. Ունի և խորանս[7] կամարակիցս և անկիւնս և շրջապատս դեղագործ յուկոյ և արծաթոյ և ականց պատուականաց. անթիւ մաաց է ասելն[8] և անդննելի աչաց. Ունի և կումբէթս[9] երկնահարթս, ոսկէզարդս և լուսաճաճանչս, որ[10] թէ նայել ոք կամեսցի. կամ[11] թ՞գաւորի. կամ այլ հարկ և պատ-

---

1 Զ. շրն.
2 Զ. եղ տղմ.
3 պրսկ.=քառակուսի.
4 Զ. շրն.
5 Զ. զի՞նչ
6 Զ. կազմեալ. լինէր (ջնջման նշ.).
7 Զ. խորարնն
8 Զ. ն յետ. աւլ.
9 Զ. մ տղմ.
10 Զ. որ տղմ. այստեղ մի քանի նախադասութիւն այնպէս անյարիր են քերականօրէն, որ բարւօք համարուեց մինչև անգամ մեզ համար խորթ կէտադրութիւնն իսկ անփոփոխ թողնել.
11 Զ. կ կրմ.

ունելի[1] մարդւոյ պատիւ առնելով. և կամէին տեսանել զգեղեցիկ դարպաս, նախ զգլխոյ գուտին ի վեր առնին[2] և ապա կարեն տեսանել զզանազան գեղոցն և զպատկերագրութի՞ւս[3] Եւ կարգ[4] շինուածոյ տաճարին ահեղ իմն և զարմանալի։ Եւ այնքան բարձրագոյն և անհաս է մտաց, որ ի բարձրեհան նման լերինն. զոր օրինակ,[5] թէ իմաստուն[6] որ այր ընդ մի կարգ խորանին մէջն բազ՞ում ժամս իշում զէր ու զամէն տեսնէր

20. տեսնէր՝ ու հետ զէր ու հիանէր, նա՛ ի հազարէն[7] զմէկն չկարէր պատմէլն[8] որ այնպէս զարդարած էր. անասելի և հիանալի էր. վ՞ս զի են ի նմա ոսկէզարդ գահոյք, յորս բազմեալ երևի արքայն նազելի ճոխու՞ք, շուրջ զիւրաւ ունելով պատանեակս լուսատեսակս սպասաւորս ուրախու՞ և. ընդ նմին և դասս զօսանաց և խաղս[9] աղճկանց զարմանալոյ արժանիս։ Անդ են և սուսերամերկաց հոյլք, որ կռիւ և թրաթափ, և երիտասարդաց և քաջ[10] քաջաց կռիւ, և քուշտ ընկերաց պատերազմունք։ Անդ է[11] և դաշք առիւծոց և այլոց գազանաց, և անդ է երամք հաւուց զարդարեալք ի պէս պէս երանգով։ Եւ թէ զա՞մ զարդարանս ի նմանէ գործած, ի թիւ և[12] ի համարս ով կարէ բերել

---

1 Զ. ի յետ. աւլ. 2 Զ. ա. ն տղմ.

3 Զ եր տղմ. 4 Զ. ր տղմ.

5 Զ. զոր օրինակս (ս յետ. աւլ. տղմ.)

6 Զ. իմաստուն.

7 Զ. Նխպ. ի հազարէր ջնջ. նշ. ար տղմ.

8 Այս հատուածը խիստ արժէքաւոր է ոչ միայն իբրև ժողովրդական ասացուածք, այլ և բարբառագիտական տեսակէտից, օր. զէր=զայր, հիանէր=հիանայր. իմաստն է. «եթէ մէկը ժամերով ման գար ու ամեն բան տեսնէր ու հիացմամբ գար պատմէր մեզ, հազարից մէկը չէր կարողանայ պատմել»։

9 Զ. ս-ին յաջորդում է մի գիծ, որ եթէ ջնջուած չհամարենք. բառը կարող է կարդացուել նաև խաղպ.

10 Զ. քաշաց, աց ջնջ. նշ.

11 է յետ. աւլ. 12 Զ. տղմ. յետ. աւլ.

կամ գիր արկանել. և թէ գրել կամի ոք, բազում աշխա

տանք [1] են

22.[2] աշխատանք են գրագրին եւ լօղին կամ ընգերձօղին. Նա է փառք տաճարին անեղ իմն և զարմա՛նլի.[3] ծղեալ են ի Նմա[4] գրունք հաստուածոյք մանգր յօրինուածով և հրաշալի գեղգեղմամբ. ը՛ փեղքէր են դռներ օդաբեր հողմոյ ուրախանային. իսկ հուպ միմիանց երևէին իբրև զմի պատկեր. Պատմե՛ց մեզ և հաւատարիմ ստախկան մի ի գործավարաց քաղաքին, եթէ եմուտ ի շինուած տաճարին երկաթս լիտրս իբրև երկերիւր հազար դեռ գքիշն կասենք. Իսկ և Նխստ փառաց տաճարին յա՛մ կողմաց գաւառին ի մէջ քաղաքին երևի իբրև զմեծ բլուր մի, ոչ ինչ մի պակաս. ի բարձրուէ՛ն քան զքարի զլուխն որ տանե՞ն բերցի գլուխ. պարսպե՛ց անմերձենալի ամրութ՛ը և գծայրս ամրոցին. որ ի կուչ[5] քարի հեա մինչ փոքր դժար է

23. դժուար է. անհուն պարըսպեցս եւ շինուած շինուեալ ի Նմա շանմարանս[6] մեծամեծս և համբարանոցս միանգամայն և տունս զանոււց (= զանձուց ?). զ՞ տուն մայի ու խղին էր. զ՞ տուն հացեստի[7] էր. գէիմ.[8] ու զրեհ. թուր բլաթկին. և Նաչախ. ու ռումբ և ասպարս անհուն բազմու՞թ.[9]

---

[1] Ձ. f տղմ. Նօտրգ.

[2] Ձ. էջ 21 չունի.

[3] Ձ. զարմանլի | յետ. աւլ. Նօտրգ.

[4] Ձ. նմանն, 2-րդ ն ջնջուած.

[5] Ձ. ուրիկուզ (?)

[6] Ձ. օ-ի վրայ ջնջման նշան.

[7] Ձ. ի տղմ. Նօտրգ.

[8] Այստեղից սկսած երկու տողի կէտադրութիւնն անփոփոխ ենք պահում իմաստի մթութիւնն ի նկատի ունենալով.

[9] Ձ. բազու՞թ.

*Այլ եթէ զա՞մ զարդ շինուածոյն և զշուկայն և զգումբէթակապ[1] խորանահարկին և զանազան տեղիս զահոյիցն որ առաւել[2] այլակերպութ՞ը ա՞ քան զ՞ա[3] գերահրաշապէս քան զարև փայլեն, այլ փոքր ի շատէ գրեցի, ի՞ռ արէն (= ի հազարէն) զմէկն ծանուցի. զի կարողուի՞ն իմ[4] այս էր, զի անասելի էր, և աչք մարդոյ չէր տեսեալ էնց գեղեցիկ տաճար.[5] և դուք լի բերանով ա՞ծ ողորմի ասացէք զազիկ թագաւորին և նախնեաց նորին և ազգայնոցն[6] ա՞մի. և ա՞ծ ողորմի[7] ասողին. (նոտր գրով և յետոյ աւելացրած՝) ամէն, եւ ինձ ղազար գծող[8] ս՞ր մատենիս, ողորմի ասացէք ա՞ծ ձեզ ողորմի ամէն:*

---

Ցաղգս Շինու՞ե Գերապայծառ. Եւ պանծալի երկնանմանն եւ բարձրգմբէթ Ս՞բ խաչիս յաղթամար քաղաքի. Որ նիւթ նկարատւորու՞ե. փառղանցս[9] բերա յերկրէն ձեռասեանէ. զորոյ մեք զիրն եւ տեղին ճառաստեաւ յայտ արասցուք թէ որպէս իցէ:

Ի *ժամանակս[10] շինու՞ե հոյակապ և հրչակաւոր և բարձրանշան քաղաքին Աղթամարայ բարձրացոյց փրկիչն յ՞ս զբաղուկս Օծելոյն իւրոյ[11] Գագկայ հարտահարեաց[12] (= հարստահարեաց?) զզազանաբարոյ[13]*

---

[1] Զ. բ *տպ.* [2] Զ. աւ *տպ.*

[3] = մի հան զմի.

[4] Զ. իմ *տպ. յետ. աւել.*

[5] Զ. *տպ. յետ. աւել.*

[6] Զ. ոցն *տպ.*

[7] որ *տպ.*

[8] Զ. ծգող.

[9] Զ. ր *տպ. և սև թանաքով, մինչ ամբողջ վերնագիրը կրմ. է.*

[10] Զ. ի ժամակս. ի *թուխագիր.* ժամակս *գլխագիր,* ժամ *կրմ.* ակս *սև թանաքով.*

[11] Զ. իւոյ

[12] Զ. ր *տպ. նոտրգ.*

[13] Զ. զզազնաբարոյ.

ազգն խմայէլի. զորս կապեաց զձեռանէ իւրմէ.[1] հաստատնիմն խորհրդով. և պատերազմական ուժեղու՞թք[2] իբրև զդանդանանաւ զկզակս ն՞ց[3] ճըմլեալ փշրեալ[4] ցրուեացէ

25. ցրըւեացէ. սկսեալ ի մարաց և պարսից զբոլոր պարսկական տուն մինչև ցխուժաստան որում կամէր աւանդէր, և յորոց ոչն կամէր ի բաց կորզէր. զայս ի մ՞ր այլոց յարուցանէր. Եւ[5] զհազարս և բիւրս ի նոցանէն[6] իմաստու՞թ սրով սատակէր. իսկ այլոց պատերազմաւ պատ՞հեալ տայր բերան[7] սրոյ և անխնայ կոտորէր՝ երբեմն իւր անձամբ[8] և երբեմն ի ձեռն զօրացն. Եւ յառնէլն արքայի[9] զայսոսիկ ժողովեաց[10] պատերազմունս ի մ՞ր ասորեստանի. բազում հեծել[11] և զաւառն և յերկիրն[12] շատ ամրոց բերդորէք[13] կէր.[13] զամէն առեց և քակեց. Եւ տեսեալ մէրձ ի դրունս ասորեստանի ամրոց մի յիշխանատանն աղձնեաց, որ է[14] բաղէշու երկիրն, ի գիւղն որ կոտոմ կոչի, լինել անդ[15] ազգ մի զուրարիկ անուն կոչեցեալ, սպառ[16]

սպուռ

---

[1] Զ. իւմէ. [2] Զ. նխպ. ուժիւ ընչ. նշ.
[3] Զ. Նց.
[4] Զ. նխպ. փշրեցէ ընչ. նշ.
[5] Զ. Ե
[6] Զ. ան տըմ.
[7] Զ. բերանոյ, ոյ ընչ. նշ.
[8] Զ. վերջին երկու կամ երեք տառերն անորոշ են. գուցէ լինի նաև անձամբն.
[9] Զ. արաքայի.
[10] Զ. ժողեաց.
[11] Այս ձևն անփոփոխ ենք թողնում իբրև հաւանական բրբ. ձև.
[12] Զ. յեկիրն
[13] բրբ. ձևեր=բերդորայք կայր.
[14] Զ. է նոտրգ. յետ. աւ.
[15] Զ. անդ-ից յետոյ, ընչ. նշ., զուրաիր.
[16] սպառ-ից յետոյ ընչ. նշ. սպա

26. սպուռ կորուսեալ ջնջե՞ց զազգն, և շինուածս ամրոցին ի հիմանէ քակեաց և ո՞պալե՞ց։ Եւ ապա գքարինս ն՞ր բարձեալ նաւով եբեր ի մ՞ր ծովուն։ Ո՞ր զ՞ր խաչս[1] կամէր շինել փոխանակ բագնաձև պղծալից յարկին, զտաճարն փառաց շինեաց։ Աստանօր կատարի ասացեալն ի մարգարէէն, թէ որ հանէ զպատուականն յանարգէն, իբրև զբերան իմ եղիցի, ուր միշտ հանգչի[2] հոգին ս՞բ վերագրելով զմարիգիկ յանստուեր լոյսն։

Եւ[3] շինեաց ի կոտոմ պայծառ եկեղեցի[4] մի, բարձրուղէշ, ի տեղի[5] կռոցն և ապա եկաւ յաղթամար։ Յայնժամ հրամայեաց թագաւորն ա՛մ վարդապետացն[6] և կոչեաց զն՞ս զարպասն մերձ յինքն և խիստ մեծարեաց զնոսայ։

Եւ գլուխ ա՛մ ճարտարապետացն արուեստին էր[7] Մանուէլն կրօնաւոր[8]

այր

27. Այր լի իմաստու՞ք և զօրաւոր ի գործ իւր և զարմանալի[9] ի պատկերահանու՞ի նման Աղդէի պատկերհանին, զոր արգար յուղարկեաց առ ք՞ս. զառ կարծեմ թէ աւելի էր քան զնա։

Ո՞վ[10] վարպետներ,[11] փափագիմ, զի եկեղեցի[12] մի շինէք յիշատակ ինձ յաւիտենական և ազգայնոցն իմոյ և հոգւոյ իմոյ փրկու՞ե։

---

1 Ձ. խաչս. 2 Ձ. ճանչի
3 Ձ. շրն.
4 Ձ. եկեղեց
5 Ձ. ի տեղի-ից յետոյ կղ ջնջ. նշ.
6 Ձ. վարդապեացն
7 Ձ. է՞ր
8 Ձ. կօնաւոր.
9 Ձ. զարմանի
10 Ձ. շրն.
11 Ձ. Նխպ. վարդապետներ՝ դա ջնջ. նշ.
12 Ձ. եկեղեցիմ մ ջնջուած.

*Ասեն[1] ամենեքեան վարդապետնէրն. Ո՛վ բարեմիտ արքայ, խնդրեմք յա՛ծդպետակամէն, որ խնչ խորհել ես տ՛ր ա՛ծ կատարէ. և ահա ա՛յ յաջողու՛թն մեզ[2] պատրաստ եմք։*

*Յայնժամ[3] եղ բերել զանձս պատուականս և ակունք անգին և հանդերձանս,[4] ոսկէզարդ յօրինեալ յակէխուռն մարգարտացն անթիւ և անհամար։*

*Յայնժամ[5] հրամայեաց խըլաել[6] զվարդապետներն և զա՛մ ձեռընտուօղներն. բազում ոսկի և արծաթ*

*բաշխե՛ց[7]*

**28.** *բաշխեաց ամենեցուն։ Իսկ յորժամ սկսան թուական հայոց, ՛դ՛ճ՛կ՛դ էր։ Օգնեա, հոգի[8] տ՛ր ա՛ծ, սկսրեցելոյ[9] յանուն քո բարձրեալ. զսկսեալս[10] մեր[11] դու կատարեա։*

*Եւ[12] ապա ամէնիմաստ գիտու՛թն որ[13] տուե՛լ է նմա ի վերուստ տ՛ր մանուէլին,[14] հրաշագործէ զեկեղեցին զարմանա՛գործ արուեստիւ և ձեռն տայ նկարել զքարինան ճշկրտագործ նմանահանութ՛ք, սկսեալ Յարքահամայ[15] և ի[16] Դաւթէ և մինչև[17] ցա՛ր[18] մեր յ՛ս[18] ք՛ս.[18] զասս մարգարէից և Առաքելոց,[19] յօրի-*

---

1 Զ. շրն. 2 Զ. մեմ.
3 Զ. շրն. 4 Զ. հանդերձս դեր տղմ.
5 Զ. շրն.
6 Զ. Նխպ. խիլաել ջնջ. նշ.
7 Զ. բաղխե՞ց.
8 Զ. թերևս հոգիս ա-ը ջնջուածի նման.
9 Զ. Նխպ. սկսեալ ջնջ. նշ.
10 Զ. ս յետ. ալ.
11 Զ. տղմ. նօտրգ.
12 Զ. շրն.
13 Զ. որ-ից առաջ լց. ջնջ. նշ.
14 Զ. կրմ. 15 Զ. հա տղմ.
16 Զ. ի տղմ. 17 Զ. եւ տղմ.
18 Զ. ցա՛ր յ՛ս ք՛ս կրմ. 19 Զ. Ա կրմ.

նեալ ըստ իւրաքանչիւր հանդիսի՝ զարմանագործ[1] տեսմամբ առեղծագործե՜լ ջոկադրէ և ի կարգս եկեղեցւոյն գնոլով էրի անասնոցն և զերամս հաւուց, միանգամայն և զասս[2] գազ՞նոց, խոզից և տախծոց, ցլուց և արջոց ընդդէմ[3] միմեանց[4] զարդարեալ, յառաջն զներքին

29. զներքին[5] գօտին կազմեցին. շրջապատ եկեղեցւոյն պանձալի մանր[6] նշաշ քար յօրինեալ կազմեցին. Եւ ապա զմարդ և զանասուն յօրինե՞լ։ Եւ[7] միջին գօտին յօրինե՞լ նկարէ պատկերս մարդոյ[8] և[9] անասնոյ արջոյ, որթոյ խաղողոյ, այգեպանով և գազանօք և սողնօք, որոց և կերպարանքն այլ և այլ զանազանու՞ք մի մի զիւրաքանչիւր պատկեր[10] այնպէս է կազմել, որ մարդ տեսանէ, խելոյն հիանա. մարդ գիտէ թէ ամէն[11] կենդանի են ամէն։ Իսկ ի դ՞, ճակատ եկեղեցւոյն ի վ՞ր գագաթան սրբուե՞ցն նկարե՞լ կազմե՞ց[12] զ,՞դ, աւետարանչաց[13] պատկերս, որք և արժանաւորապէս խեկ են պսակ ուրախուե՞ ո՞րյ եկեղեցւոյ և[14] վերագոյն քան զա՞մ ո՞րս՝ նկարագրէ տ՞նազրելով և զփրկչական[15] պատկերն, որ վ՞ս մեր[16] զգեցաւ մարմին

---

[1] Ձ. նխպ. զարմանագործե՞ղ, ե՞լ ջնջուած.

[2] Ձ. 2-րդ ս տղմ. [3] Ձ դեմ տղմ.

[4] Ձ. նխպ. միմիանց.

[5] Ձ. զներին.

[6] Ձ. նխպ. մանզ(ր), ջնջ. նշ.

[7] Ձ. Ե կրմ.

[8] Ձ. դ տղմ.

[9] Ձ. եւ-ից յետոյ մար ջնջ նշ.

[10] Ձ. կ տղմ.

[11] Ձ. նխպ. ան փոխ. ամ(են), հաւանօրէն բրբ. արտասանութիւն (*անմեն) ազդեցութեան տակ։

[12] Ձ. մ տղմ. նոտրգ.

[13] Ձ. աւետարնչաց [14] Ձ. եւ-ից յետոյ վայել ջնջ. նշ.

[15] Ձ. զ տղմ. [16] Ձ. մերն

**30.** *մար՞մ երեելով մարդ. և է ի յարևմտից կողմ խորանին նմանահան ճշգրտու՞ք յօրինեալ է ընդդէմ փրկչին և փառազարդ պատկեր արքային գագկայ. Որ մեծապայծառ հաւատով բարձրեալ ունի զեկեղեցին ի վ՞ր բազկացն իբրև զսափորն ոսկի լի մանանայիւն[1] և իբրև զտուփ մի ոսկի լի անուշահոտու՞ք լցեալ զայ առաջի ա՞ն կերպագրեալ այնպէս որպէս թէ թողու՞ի խնդրէ մեղաց. որ[2] թէպէտև մերս պատմութե՞ց[3] իցեն բանք, սակայն թագաւորն ոչ վրիպի ի խնդրեալ[4] պարգևացն. յուսացեալ է[5] առ հանդերձեալ հատուցմունսն.[6]*

*Դ՞ր՞ձլ և ի հարաւակողմ կուսէ խորանին ի վ՞ր դրան եկ՞ղցւոյն յօրինեալ է Տեղի գահոյից ի բարձանց ի խոնարհ կամարաձև աստիճանօք ել և էջն. Որ է տեղի[7] աղօթից թագաւորին*

*առանձին*

**30.**[8] *առանձին ի մարդկանէ. որով ի միտս իւր եկեալ անսքաղապէս ընդ ա՞յ խօսի[9] թ՞գ՞ւրն և թամար թագուհին, որ նա ի թագաւորական ցեղէն[10] էր[11] անձամբ վայելուչ և պատկերօք գեղեցիկ նման եայի, և առաքինու՞ք նման[12] հռիփսիմին.*

*Իսկ[13] զներս եկեղեցւոյն զ՞սրու՞ի ս՞բու՞եցն հրաշալի իմ՞ գործեաց. յօրինեալ է ծաղկէգեղօք*

---

1 Ձ. այ տղմ. 2 Ձ տղմ.

3 Ձ. մ տղմ. 4 Ձ. ր նօտրգ. յետ աւ.

5 Ձ. ե նօտրգ. յետ. աւ.

6 Ձ. Նխպ. հատուցմունն ջնջ. նշ. իսկ հատուցմունս-ի մէջ 2 րդ ն տղմ.

7 Ձ. տեղի-ից յետոյ ադիք ջնջ. նշ.

8 Ձ. 30 իջահամարը կրկնուած.

9 Ձ տղմ.

10 Ձ. ն ջնջ. նշ.

11 Ձ. եր յետ. աւ. նօտրգ.

12 Ձ. Նխպ. եամ ջնջ. նշ.

13 Ձ. շրն.

գլամբք արծաթապ՟տօք և լի ոսկէհուռն[1] զարդիւք,[2] և ազգի ազգի[3] երևելի պայծառ ապասիւք անասելի, և պատմելի բերանոյ մարդոյ և աչաց է անտեսանելի, այնպէս զարմանալի գործ. զոր հրաշափառապէս եցոյց[4] մեզ երկ՟րդ երուսաղէմ, միանգամայն և դուռն վերին սիօնի։ Աստանօր կ՟արի մ՟րգրէուե՟ն նուագք, թէ ուրախ լեր[5] յանապատ ծարաւի, և դ՟րձլ եթէ ցնծասցէ երկիր և ուրախ[6] եղիցին կղզիք բազումք։ Արդարև[7] սա էր երբեմն անապատ ծարաւի, իսկ այժմ քաղաք մեծ

ին

**31.** մեծին ա՟յ գետնետեալ[8] յերկուց մշտաբուղխ աղբերաց, ի ս՟րյ յաւա՟գնէն և յանապական արենէ որդւոյն ա՟յ, արբուցանէ[9] զողով ծարաւիս։

Եւ[10] եղև զրաւ և աւարտ[11] ս՟րյ տաճարիս ի թուականն[12] հայոց էր ՟գ՟ճ՟հ և[13] ի[14] դ՟ տարին յետոյ ազատեցան ի շինելոյ։

Եւ[15] ապա հրաման տուեալ յ՟ամ աշխարհ գալ երջանիկ[16] վարդապե՟՟ց (=վարդապետաց) և արհի

---

[1] Ձ. ոսկեխուռն, խ-ի վրայ տղմ. ն. խ Վանայ շրջանի յատուկ բրբ. արտասանութեան արդիւնք է. մի երևոյթ, որ դեռ Թովմա Արծրու օրով գոյութիւն ունէր։

[2] Ձ. զարդարիւ, ար ջնջ. նշ.

[3] Ձ. ազգի ազի   [4] Ձ. եցոյ եցոյց.

[5] Ձ. լե լեր լեր, առաջին երկուսը ջնջ. նշ.

[6] Ձ. ր տղմ.

[7] Ձ. արդարեւ-ից յետոյ եւսար ջնջ. նշ.

[8] Ձ. վերջին ե տղմ.

[9] Ձ. արուցանէ.

[10] Ձ. շրն.

[11] Ձ. աւաս.

[12] Ձ 2-րդ ն տղմ.

[13] Ձ. եւ-ից յետոյ ի սարին ջնջ. նշ.

[14] Ձ. ի տղմ.

[15] Ձ. շրն.

[16] Ձ. երջանանիկ.

*ե՞պսաց անթիւ և բազում կրօնաւորաց[1] և քահանայից, իշխանաց և պարոնաց և ազատորդաց և մեծամեծաց և փոքու[2] գալ ի Նուակատիս եկեղեցւոյս շքեղացուցանէլով։ Եւ տօն մեծ կատարէին ուրախու՞թ, մեծապայծառ պանծանօք յիշատակ[3] յազգաց յազգ, որդւոց յորդիս, թոռանց ի թոռս։[4]*

---

Ցաղագս զայոյն Տ͞ր Գէւորք Կ͞թկոսին. Նոյն եւ աւարտում Ս͞րյ ամենազօր Տանարին[5] Ս͞ր խուչ կոչեցելոյ, զոր արար արքային պատիւ ճայրապետին. ճառեյի է յաղագս Ն͞ր:[6] Նոյնպէս բերեաց նես իւր գուչ յուսորչին,[7] եւ յաղագս բազում յիշատակ͞ց որք

կան ի ս͞ր խաչն յաղթամարայ.

**33.**[8] *Ա՛րդ վերծանեալ թվոյ գոր արարին Նուակատիկ տաճարին, յա՞մ Նահգաց (=Նահանգաց) հայոց եկին ի տեսանել գհրաշագործ տաճարն նոյնպէս եւ այլազգիքն գային և զարմանային նորասքանչ արքային, որ[9] այնպէս ամրոց[10] կառուցե՞լ էր։ Իսկ հայրապետ հայոցն էր Տէր Գէւորք որ ազգակից[11] էր[12] Մաշթոց*

---

[1] Զ. *անշուշտ բրբ.*

[2] Զ. փուքու, *առաջին ւ ջնջ. նշ.—*փուքու *հաւանօրէն բրբ.*

[3] Զ. յիշատակս.

[4] Զ. *շարունակութիւնից, որ ընկնում է էջի ստորոտում, չորս տողի չափ ծածկուած թղթով, որի վրայ մի երկրորդ ձեռք կրմ. և նօտրգ. գրած է այն վերնագիրը, որ և նոյնութեամբ ընդօրինակում ենք։*

[5] Զ. տանին.

[6] *(Շարունակութիւնը սև թանաքով և նօտրագիր, հաւանօրէն մի երրորդ ձեռքի).*

[7] *Հաւանօրէն բրբ.*

[8] *32 իջաթիւ չկայ.*

[9] Զ. որ-*ից յետոյ* այք *ջնջ. նշ.*

[10] Զ. *ամ. նօտրգ.*

[11] Զ. ազգակակից, *առաջին* կ-*ի վրայ ջնջ. նշ.*

[12] Զ. էր *նօտրգ. ամ.*

Կ՝Թկին [1] որ նստէր յէջմիածին։ Սա լուաւ զկատարումն զարմանալի գործոյն արքային. եւ պատմեցին նմա զհրաշալի [2] շինուածն Մ՞րյ խաչին և զամրու՞ի զահին գազկայ, որ յա՞մ կողմանց ծովով շրջապատեալ (=շրր-ջապատեալ) էր, եւ բարեգործու՞ի [3] արքային։

Յայնժամ [4] պատրաստեաց ընծայն հոգևորապէս. եկն փութով Տէր Գէւորք Կ՝Թկոս հանդերձ [5] ե՞պսկպսօք, բազում վարդապ՞տօք ի նուակատիս տաճարին տեառ՞ի արքային։ Իբրև ժամանեաց [6] Կ՝Թկոսի գունդ ի կապանն [7] ամրոցին ոստանայ, յառաջեաց մի ոմն իշխանաց, եղ [8] (=եւ) աւետիս արքային [9] թէ

34. [10] Թէ աւանիկ սրբազան եկեալ է ի դուռն կապին, կամի տեսանել զարմանալի տաճ՞րն։ Իբրև լուաւ արքայն, զարդարեաց զա՞մ փողոցս ի պատիւ հայրապետին, մանաւանդ զինքն և զօրս իւր, և մ՞րգպտքն որք անդ էին. նոյնպէս Տէր եղիշէ արքե՞պս. [11] ապա նստան նաւն. յերբ նաւն ժամանեաց ի ցամաքն, եկեալ արքայն ոսկիակազմ կառն [12] և նստաւ [13] ի վերայ ն՞ր. [14] եւ հանդերձ վար՞դպաց բազմամբոխ զօրաց և ռամկաց։ Յօրժամ յանդիման եղեն միմեանց գունդք [15] հայրապ՞տին և Թագ՞ւրին, ծվ ընդերձօղքդ

---

[1] Զ. ին տղմ.
[2] Զ. ալ տղմ.
[3] Զ. ե տղմ.
[4] Զ. շրն.
[5] Զ. նխպ. հանդձ ջնջ. նշ.
[6] Զ. իբրև-ից յետոյ ժամեան ջնջ. նշ.
[7] Զ. 2-րդ ն տղմ.
[8] Զ. յեղ. յ կիսատ.
[9] Զ. այքային (բրբ. ?)
[10] Զ. այս էջի վրայ, ինշահամարից վերև, գրուած է գ. մինչ նախորդ էջի վրայ բ.
[11] Զ. արք ից առաջ աք ջնջ. նշ. (հմ. էջ 61 աւագ, աբուցանէ).
[12] Զ. կառն ից առաջ կառան ջնջ. նշ.
[13] Զ. նստու
[14] Զ. տղմ.
[15] Զ. ք տղմ.

և լսողքդ, դու տես զբազում խնարհուի՛ արքային, զարմանալի[1] և հիանալի[2] ի տեսանել ն՛ր հեռաստանէ զգունդն հայր՚պտին, իսկոյն ի վայր իջեալ արքայեակ կառէն՝ հետիոտ[3] քայլէր։ Իբրև մերձեցան առ մի-մեանս, կալեալ արքային զերջանիկ[4] զաշապարն հայր՚պտին՝[5] համբուրէր ըստէպ ըստէպ։ Ապա առեալ ընդ իւր զհայր՛պտն ելեալ[6] ի կառս արքունակ՚ն, իսկ զումարք վր՚ոց նուաք

էին

35. Ին զերդս շարկանաց մինչ ի յափն ծովուն ի նաւն։ Դ՚րձլ, յորժամ մերձցաւ[7] նաւն ի յանառիկ կղզւոյն յաղթամու, իսկոյն հնչեցուցին զանկակս. զորքն[8] թգ՛ւրին առեալ զաւր ի ձեռն իւրեանց՝[9] փայլեցուցանէին.[10] նոյնպէս շառաչեցուցանէին զաղեղունս. ճչումն և որոտումն[11] կալաւ զերկիրն. շառաչումն, փայլատակումն, ձայնք[12] մարդկանց, նուագումն պարուց և երգոցն հիացուցանէր զմարդկայի[13] բնուի՛ն։ Այնպէս էր[14] որ ձայն մի աւուր ճանապար հասանէր։

Եւ[15] յառանձնանալ հայրապետին[16] և թագաւորին հանեալ կթ՛կոս զգանձն անգին՝ եդ առաջի արքա-

1 Ձ. ի յետ. աւլ. 2 Ձ. ալ տղմ.
3 Ձ. ճեռի ոռ
4 Ձ. նխպ. զերջակի ջնջ. նշ.
5 Ձ. լուսանցքում նօտրգ.
6 Ձ. տղմ.
7 Ձ. ց տղմ. ա-ի վրայ.
8 Ձ. ք տղմ.
9 Ձ. իւեանց
